



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ

« 2 » հուլիսի 2021թ.

№ 655-2

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 342-Լ  
ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 702-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի հունիսի 6-ի «Մաքսային գործառնությունների իրականացման վայրերը սահմանելու մասին» N 342-Լ հրամանի (այսուհետև հրաման) 2-րդ կետի 2-րդ ենթակետում «տեղափոխման վայրը» բառերից հետո լրացնել «հաշվի առնելով սույն ենթակետի ա. և բ. պարբերություններով նախատեսված առանձնահատկությունները» բառերը:

2. Հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետը լրացնել նոր՝ ա. և բ. պարբերություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ա. Արևելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի, նույն մաքսատուն-վարչության Գոգավանի-Պրիվոլնոյեի, նույն մաքսատուն-վարչության Այրում-Ջիլիզայի, Հյուսիսային մաքսատուն-վարչության Բավրայի և Հարավային մաքսատուն-վարչության Մեդրիի մաքսային կետ-բաժններում կարող են իրականացվել բացառապես անձնական օգտագործման ապրանքների, «արտահանում», «վերաարտահանում», «ժամանակավոր արտահանում», «ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգերով հայտարարագրված և (կամ) «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով հայտարարագրված ապրանքների մաքսային հայտարարագրման և բացթողնման մաքսային գործառնությունները:

Անձնական օգտագործման ապրանք չհանդիսացող և սույն ենթակետի առաջին պարբերությունում նշված ընթացակարգերից տարբերվող մաքսային ընթացակարգերով Արևելյան մաքսատուն-վարչության Բագրատաշենի, նույն մաքսատուն-վարչության Գոգավանի-Պրիվոլնոյեի, նույն մաքսատուն-վարչության Այրում-Ջիլիզայի, Հյուսիսային մաքսատուն-վարչության Բավրայի և Հարավային մաքսատուն-վարչության Մեդրիի մաքսային կետ-բաժններում կարող են իրականացվել բացառապես ԱՏԳ ԱԱ 01-08 ապրանքային խմբերում դասակարգված շուտ փչացող ապրանքների, ինչպես նաև հայտարարատուի հիմնավորված դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի կամ նրա՝ մաքսային ոլորտը համակարգող տեղակալի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով տրամադրված գրավոր թույլտվությամբ՝ ներմուծվող այլ ապրանքների մաքսային հայտարարագրման և բացթողնման մաքսային գործառնությունները:

բ. Սույն հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետի ա. պարբերությունում սահմանված ապրանքներից տարբերվող մյուս ապրանքների մաքսային հայտարարագրման և բացթողնման մաքսային գործառնությունները կարող են իրականացվել սույն հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված՝ պետական եկամուտների կոմիտեի այն կառուցվածքային ստորաբաժանումում, որի գործունեության տարածքն ընդգրկում է տեղափոխվող ապրանքների նշանակման վայրը կամ հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված պետական եկամուտների կոմիտեի այն կառուցվածքային ստորաբաժանումում, որը հանդիսանում է մաքսային կետ-բաժինն ընդգրկող

մաքսատուն-վարչությունը՝ TT IM տեսակի «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով սահմանված կարգով լրացված մաքսային հայտարարագրի հիման վրա:

3. Հրամանի 3-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3 Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 14-րդ և 15-րդ գլուխներով սահմանված՝ ժամանման և մեկնման մաքսային գործառնությունները, բացառությամբ սույն հրամանի 2.1-րդ կետում նշված դեպքերի, երբ այդպիսի մաքսային գործառնություններն իրականացվում են տվյալ կետում նշված վայրերում, իրականացվում են սույն հրամանի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված վայրերում, հաշվի առնելով 2-րդ կետի 2-րդ ենթակետի ա. և բ. պարբերություններով նախատեսված առանձնահատկությունները»:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:



7/2/2021

X *Edvard*

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN EDVARD 2001830505

**ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**